

ԴՐԱԿԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ԳՐԱՎԱԿԱՆՆԻ՝ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ

«Գործընթաց» թերթի հարցազրույցը ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետ

Սյունիքում 2011թ. սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքների և 2012թ. ծրագրերի, նաև առաջիկա ընտրական գործընթացի շուրջ հարցազրույցը ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանի հետ նրա թափանցիկ և հանրության առջև հաշվետու գործելակերպի հերթական հավաստումն է:

«Գործընթաց» - Սյունիքի մարզում 2011թ.-ին սոցիալ-տնտեսական զարգացման ի՞նչ ծավալի ծրագրեր են իրագործվել, և եթե հայտնի է, որքա՞նն է նախատեսված իրականացնել 2012թ.-ին:

Ս. Խաչատրյան - Եթե ընդհանրական ձևով ամփոփենք 2011 թ.-ն, ապա պետք է նշել, որ մեզ հաջողվել է մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնել պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական և գործադիր մարմինների ու նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության ու գործողությունների փոխհամաձայնության հիման վրա:

Ու չնայած ընդհանուր տնտեսական ոչ բարենպաստ պայմաններին՝ շնորհիվ Հանրապետության բարձրագույն իշխանությունների, մասնավորապես՝ Հանրապետության Նախագահի, ՀՀ կառավարության անմիջական աջակցության, մեզ հաջողվել է դրական դինամիկա ապահովել տնտեսության մի շարք ճյուղերում (արդյունաբերություն, գյուղատնտեսություն, քաղաքաշինություն, զբոսաշրջություն), որի արդյունքում հնարավոր եղավ լուծում տալ մարզում առկա մի շարք հիմնախնդիրներ:

ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2011թ. տարեկան աշխատանքային պլանով մարզում իրականացվել են ավելի քան 16.8 մլրդ դրամի ներդրումներ, այդ թվում, ըստ ոլորտների և ուղղությունների՝ ՓՄՁ և մասնավոր հատված՝ 6.737 մլրդ դրամ, կրթություն՝ 935.7 մլն դրամ, մշակույթ և սպորտ՝ 356.1 մլն դրամ, առողջապահություն՝ 1.025 մլրդ դրամ, սոցիալական պաշտպանություն և երեխաների պաշտպանություն՝ 165.4 մլն դրամ, արդյունաբերություն՝ 1.666 մլրդ դրամ, գյուղատնտեսություն՝ 1.978 մլրդ դրամ, բնապահպանություն՝ 284.8 մլն դրամ, քաղաքաշինություն՝ 774.4 մլն դրամ, ծանապարհաշինություն՝ 1.674 մլրդ դրամ, ջրամատակարարում՝ 649.0 մլն դրամ, զբոսաշրջություն՝ 525.3 մլն դրամ, տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակություն՝ 54.2 մլն դրամ: 2012թ. տարեկան աշխատանքային պլանով մարզում նախատեսվում է իրականացնել ավելի քան 21.7 մլրդ դրամի ներդրումներ:

«Գործընթաց» - Արդյունաբերության ոլորտում 2011թ.-ին ի՞նչ նոր արտադրություններ են հիմնվել և ներդրումներ արվել, որքա՞ն աշխատատեղեր են ավելացել: Ի՞նչ սպասումներ կան այս առումով 2012թ.-ին:

Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013 թթ.-ի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով ներդրումային ծրագրերի առաջարկ ներկայացրած կազմակերպություններից 2011 թվականին մարզում հանքարդյունաբերության, հիդրոէներգետիկ, տեղական հումքի վերամշակման, սննդի և թեթև արդյունաբերության բնագավառներում ստեղծվել են 16 նոր ձեռնարկություններ՝ 294 նոր աշխատատեղերով, ինչպես նաև գրանցվել են 20 անհատ ձեռնարկատերեր՝ 32 նոր աշխատատեղերով, գործող ձեռնարկություններում ստեղծվել են 244 նոր աշխատատեղեր, «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում՝ 142 ժամանակավոր աշխատատեղեր:

Մարզում նոր ներդրումների արդյունքում առաջիկայում նախատեսվում է նաև մարզկենտրոն Կապանում հիմնել պահածոների գործարան: Այն հնարավորություն կընձեռնի Կապանի տարածաշրջանի կանանց ապահովելու նոր աշխատատեղերով:

«Գործընթաց» - Գյուղըլորտում իրականացված, ընթացիկ կամ իրագործվելիք ի՞նչ ծրագրեր կան, այդ թվում՝ աջակցության:

Ս. Խաչատրյան - 2011թ. ընթացքում մարզում գյուղատնտեսությամբ զբաղվել են 18026 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններ, գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ և արտադրությամբ՝ 58 գյուղատնտեսական կազմակերպություններ:

Մարզում 2011թ. բերքի տակ է դրվել 29848հա ցանքատարածություն, որից 20353հա հացահատիկային մշակաբույսեր, 374.1հա հատիկալոծողային մշակաբույսեր, 1677հա կարտոֆիլ, 971.7հա բանջարա-բոստանային մշակաբույսեր, 5505.5հա կերային մշակաբույսեր: Պտղի և հատապտղի ցանքատարածությունները կազմել են 2587հա, իսկ խաղողը՝ 184.8հա:

2011թ. աշնանացանը կազմել է 14124հա և կատարվել է ցրտահերկ՝ 3000հա /2010թ. համապատասխանաբար՝ 10288հա աշնանացան և 2200հա ցրտահերկ/: Տարվա ընթացքում մարզ է ներկրված 1200 տ պարարտանյութից 500տ բաշխվել է զգալիորեն զեղչ զներով:

Ավելի քան 1 մլրդ. դրամի ներդրումներ են կատարվել ոռոգման համակարգերի վերականգնման և հիմնանորոգման ուղղությամբ: Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել հակահամաճարակային և պրոֆիլակտիկ միջոցառումների իրականացման ուղղությամբ:

Գյուղատնտեսական առկա տեխնիկական հիմնականում մաշված է, հիմնախնդիր է նոր տեխնիկայով համալրումը և առկա հավաքակազմի արդիականացումը, ինչպես նաև գյուղմթերքների իրացումը:

Արդեն իսկ մարզում սկսվել են գյուղտնտեսությունների կողմից զարմանացանի աշխատանքները: ՀՀ կառավարության 2011 թ. դեկտեմբերի 22-ի N 1802-Ն և ՀՀ կառավարության 2012 թ. փետրվարի 2-ի N75-Ն որոշումներով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության հողօգտագործողներին մատչելի զներով ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրով մարզի համայնքներին կտրամադրվի 2500տ ազոտական պարարտանյութ և 300տ դիզելային վառելանյութ:

«Գործընթաց» - Քաղաքաշինության ոլորտում 2011թ ի՞նչ ձեռքբերումներ են արձանագրվել՝ կրթական, առողջապահական, մշակութային կառույցների շինարարությանն ու ենթակառուցվածքների բարելավմանը, զարգացմանն ուղղված: Ի՞նչ է պլանավորված 2012թ-ին:

Ս. Խաչատրյան - 2011թ-ին մարզում իրականացվել են շուրջ 5.5 մլրդ. դրամի համաշինարարական աշխատանքներ, որից՝ 720.7 մլն դրամի կապիտալ շինարարության և 4.8 մլրդ. դրամի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքներ: 2011 թ.-ին շարունակվեցին լուծում ստանալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված հիմնախնդիրները: Դրանց մի մասի իրականացման նպատակով ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 3-ի N108-Ն որոշմամբ Սյունիքի մարզին հատկացվել է 720 մլն դրամ, որը նպատակաուղղվել է քաղաքային համայնքների ճանապարհային ցանցի ասֆալտապատմանը, վերանորոգմանը, ինչպես նաև կրթական, մշակութային կառույցների, բնակֆոնդի հիմնանորոգման, պահպանման և խմելու ջրի ներքին ցանցերի նորոգման աշխատանքներին:

2011թ սեպտեմբերի 29-ի ՀՀ կառավարության 1436-Ն որոշմամբ Սյունիքի մարզին հատկացվել է ևս 720 մլն դրամ, որից 404 մլն դրամը նպատակաուղղվել է քաղաքային համայնքների ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատմանը և նորոգմանը, ինչպես նաև դպրոցների, նախակրթարանների հիմնանորոգմանը, մատաղ սերնդի դաստիարակության պայմանների բարելավմանը:

Մարզի հրատապ հիմնախնդիրների լուծման նպատակով ընդհանուր առմամբ Սյունիքի մարզպետարանին հատկացվել է 1 մլրդ. 440 մլն դրամ, որը նպատակաուղղվել է քաղաքային համայնքների ճանապարհների ասֆալտապատմանն ու վերանորոգմանը, ինչպես նաև կրթական, մշակութային, նախադպրոցական կառույցների և բնակֆոնդի հիմնանորոգմանն ու պահպանման, խմելու ջրի ներքին ցանցերի նորոգման աշխատանքներին: Մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են 1.1 մլրդ. դրամի հիմնանորոգման աշխատանքներ:

2011 թ.-ին այլ պատվիրատուների՝ Ասիական զարգացման բանկի միջոցներով 350 մլն դրամի աշխատանքներ են կատարվել Կապան քաղաքի ջրամատակարարման ցանցերի հիմնանորոգման, քաղաքի որոշ թաղամասերում ներքին նոր ցանցերի կառուցման ուղղությամբ: 200 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ են կատարվել նաև Մեղրիի տարածաշրջանում: 180.3 մլն դրամով վարչական նոր շենքեր են կառուցվել Սիսիան և Ազարակ քաղաքներում:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով շարունակվել և 2011 թ. ավարտվել է Կապանի բուժկենտրոնի մանկական մասնաշենքի հիմնանորոգումը:

ՀԱՆԴ միջոցներով իրականացվել են 341.3 մլն դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ՝ Գորիս, Քարաշեն, Կորնիձոր, Անգեղակոթ, Խնձորեսկ, Խնածախ, Գեղանուշ, Մեղրի և Բնունիս համայնքներում: Ընդհանուր առմամբ մարզի 33 համայնքներում պետպատվերից դուրս, այլ կազմակերպությունների ընդգրկմամբ, իրականացվել է 84 ծրագիր, որի արդյունքում լուծում են ստացել սոցիալական և բնակչության կենսապահովման մի շարք հիմնահարցեր:

2011 թ.-ին նշյալ ծրագրերի գծով կատարվել են ավելի քան 331.4 մլն դրամի կառուցման և հիմնանորոգման աշխատանքներ: 2012թ. կշարունակվեն ճանապարհային ցանցի ասֆալտապատման, վերանորոգման, ինչպես նաև առողջապահական, կրթական, մշակութային, բնակֆոնդի հիմնանորոգման, պահպանման և նորոգման աշխատանքները, մոտ 328.0 մլն դրամի չափով:

Շվեյցարական զարգացման և համագործակցության գործակալության «Սոցիալական տուն՝ աջակից պայմաններով» ծրագրի շրջանակում շարունակվում են Գորիսում սոցիալական տան կառուցման աշխատանքները, որի համար, որպես համաներդրում, 65 մլն դրամ է հատկացվել:

«Գործընթաց» - Հայաստանում բնապահպանության ոլորտում աննախադեպ քայլ էր Ձեր պաշտոնավարման շրջանում Ձեր անմիջական ջանքերով Շիկահողի անտառի պահպանումը ծառահատումներից: Այս ոլորտում ի՞նչ ծրագրեր են իրականացվել 2011թ.-ին կամ իրագործվելու այս տարի:

Ս. Խաչատրյան - 2011թ. սկսվել են գերմանական զարգացման բանկի /KFW/ ֆինանսավորմամբ Շիկահողի կենսոլորտային արգելոցի և շրջակա համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կարիքների գնահատման նախապատրաստական աշխատանքները: Ծրագիրն՝ ընդհանուր 8250.0 հազ. եվրո ներդրմամբ, կուղղվի Շիկահողի կենսոլորտային արգելոցի ստեղծման և Կապան, Շիկահող, Ծավ, Սրաշեն, Ճակատեն, Ն.Հանդ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացմանը: Ծրագրի իրագործումը կմեկնարկի ընթացիկ տարում:

«Գործընթաց»- Սոցիալ-առողջապահական ի՞նչ ծրագրեր, միջոցառումներ են իրականացվել 2011թ.-ին և ի՞նչ է նախատեսված 2012թ.-ի համար:

Ս. Խաչատրյան – 2011թ. սկսվել են Համաշխարհային բանկի վարկային ծրագրով Կապանի բուժ կենտրոնի և Մեղրու տարածաշրջանային բուժկենտրոնի արդիականացումն, իսկ այս տարվանից նաև հիմնանորոգումները: Մեղրիում կսկսվի նոր բուժկենտրոնի կառուցումը: 2011թ. ՁՊՄԿ-ի միջոցներով սկսվել է Քաջարանի բուժկենտրոնի վերակառուցումն ու հիմնանորոգումը: Կբացվի մարզային նշանակության նորածնային և մանկական վերակենդանացման բաժանմունք: Նախատեսվում է Գորիսի բուժկենտրոնում հիմնել ծրագրային հենդիկալիզի բաժանմունք: Իմ անմիջական նախաձեռնությամբ 2011թ. մեկնարակած անվճար բուժակցիայի շրջանակներում մարզի բոլոր առողջապահական կառույցներում բարձրակարգ բժիշկների մասնագիտական խումբն իրականացրել է «Բաց դռների օրեր», որի ընթացքում հետազոտվել է 2700 մարդ, իսկ 68 հիվանդների տրվել է միջնորդագիր՝ հիվանդանոցային պայմաններում անվճար բուժօգնություն ստանալու համար: Սա շարունակական միջոցառում է: Բացի այս, իրականացվելու են ակնաբուժական հետազոտություններ և վիրահատություններ՝ հրավիրված մասնագետների և «Լույս հայի աչքերին» ծրագրով:

Սյունիքի մարզպետարան դիմած 961 քաղաքացիներից 856-ին տրվել է դրամական օգնություն:

Հաջողությամբ շարունակվել է «Սոցիալական տուն աջակից պայմաններով» ծրագրի հիմնական՝ «Գորիս-2» փուլը, Շվեդարական զարգացման և համագործակցության գործակալության և ՀՀ կառավարության համաֆինանսավորմամբ: Այս փուլում լուծում կատանա սոցանապահով, վազոն-տնակներում բնակվող 22 ընտանիքների բնակարանային ապահովության հարցը: Ծրագրի նպատակն է նաև ուժեղացնել համայնքային իշխանությունների կարողությունը սոցիալական աշխատանքի բնագավառում:

Շարունակվելու է մարզի տարածաշրջաններում գործող բոլոր առողջապահական ընկերություններում իրականացվող "Բաց դռների օր" միջոցառումների կազմակերպումը:

«Գործընթաց» - Սյունիքում, որն ամենախոշոր վարչատարածքային միավորներից է, Ձեզ հաջողվել է մշտապես արդյունավետ կազմակերպել կամ համակարգել ընտրությունները: Ինչպիսի՞ ընտրություններ են, ըստ Ձեզ, սպասվում առաջիկայում:

Ս. Խաչատրյան - Որպես ՀՀ Սյունիքի մարզպետ՝ համապետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպմանը կամ համակարգմանն առնչվել եմ այնքանով, որքանով դա պահանջել է գործող ընտրական օրենսդրությունը: ՏԻՄ հերթական ընտրությունների դեպքում, նշանակել եմ դրանք, իսկ վերջիններիս ու համապետական ընտրությունների ժամանակ ապահովել եմ մեթոդական և խորհրդատվական աջակցության ցուցաբերումը մարզի համայնքների ղեկավարներին՝ տեղամասային կենտրոններ ձևավորելու, թեկնածուների կամ կուսակցությունների նախընտրական քարոզչության համար հավասար պայմաններ ապահովելու և այլ հարցերում: Այս առումով, այո, մեր մարզում, անկախ քաղաքական որևէ ուժի հաղթանակած լինելու հանգամանքից, ընտրությունները մշտապես ազատ, արդար ու արդյունավետ են եղել, որովհետև մեզ մոտ ապահովվել է ամենանակարևորը՝ մարդկանց կամքի ազատ արտահայտման սկզբունքը:

Որպես Հայաստանի Հանրապետական կուսակցության տարածքային խորհրդի նախագահ՝ համակարգել եմ համապետական և ՏԻՄ ընտրություններում մեր կուսակցության ու նրա կողմից առաջադրվող կամ պաշտպանվող թեկնածուների նախընտրական քարոզչության անցկացման աշխատանքները և, ի պատիվ մեր կուսակցական ընկերների, կարող եմ ասել, որ մեծ մասամբ արժանագրել ենք մեզ տրված քվեների բարձր տոկոս: Մեր հաղթանակների կարևորագույն նախապայման են համարում ՀՀԿ արդյունավետ գործունեությունը Հայաստանի քաղաքական դաշտում: Այլևս անժխտելի է այն, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը երկրի քաղաքական համակարգում գրավել է ուրույն, արժանավոր ու ամուր տեղ և իր ծանրակշիռ ներդրումն է բերում Հայաստան երկրի զարգացման, հարատևման ու ազգային խնդիրների լուծման գործին: Հանրապետական կուսակցության անունը համադրվում ու զուգորդվում է հայրենասիրության, ազգային արժանապատվության, ազգային քաղաքական խնդիրների քաղաքակիրթ և բարեհաջող լուծման գործընթացների հետ: Եթե հետադարձ հայացք ձգենք մեր անցած ուղու վրա, ապա կտեսնենք, որ զգալի են մեր ձեռքբերումները և անուրանալի են մեր ծառայությունները ժողովրդի հանդեպ: Կարծում եմ, մարզում մեր հաջողությունների գրավականը ոչ միայն մեր նախընտրական աշխատանքների հետ է կապված, այլև առաջին հերթին մեր կատարած գործերի և մեր ընտրած ուղու ճշմարտացիության հետ:

Ինչ վերաբերում է առաջիկա ընտրությունների ինչպիսիս լինելուն, ապա կարող եմ ասել, որ ընտրությունից ընտրություն գործընթացներն ավելի են կատարելագործվում: Ինչպես գիտեք, ընդունվել է նոր ընտրական օրենսգիրք, որն ավելի մեծ հնարավորություններ է ստեղծում ընտրությունները թափանցիկ ու արդար անցկացնելու համար: Առաջիկա ընտրությունները կլինեն ավելի լավը, քան նախորդներն էին: Այս առումով մեզ սպասվում են ավելի թափանցիկ, ավելի ազատ և ավելի արդար ընտրություններ:

Հարցազրույցն՝ Ինարա Դանիելյանի